ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ջեռուցման համակարգի կցամասերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 31.10.2018թ. N 307/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 13.11.2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Դուրգարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Հ.Վանյանը, Ս.Սարգսյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Աճուրդի ամփոփման արդյունքների մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Մ.Դուրգարյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
«Էկոմիքս» ՍՊԸ-ն (ք. Երևան, Լենինգրադյան 31/1, բն.28)

2.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

«Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	Նախահաշվային գինը ՀՀ դրամ
		«Էկոմիքս» ՍՊԸ	
1	Կենտրոնական ջեռուցման ռադիատորների փականներ	-	38 400
2	Ջրային հոսքերի կարգավորման փականներ	-	15 000
3	Ջեռուցման համակարգի նյութեր	99166.67	175 000
4	Ջեռուցման համակարգի նյութեր	4583.34	7 000
5	Ջեռուցման համակարգի նյութեր	2500	5500
6	Ջեռուցման համակարգի նյութեր	3333.34	4500
7	Խողովակների միացման մասեր	2500	4500
8	Ջեռուցման խողովակներ	75000	114 000
9	Ջեռուցման խողովակներ	56250	87 000
10	Փականների մասեր	16666.67	18 000

4. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

5. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «Էկոմիքս» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. «Էկոմիքս» ՍՊԸ-ին 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժիններով ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:
3. ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի ամփոփման արդյունքները արձանագրեց, որ «Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից 10-րդ չափաբաժնի համար ներկայացված գինը /20 000 ՀՀ դրամ/ գերազանցում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի գնումների պլանով հաստատված նախահաշվային գինը /18 000 ՀՀ դրամ/:
4. ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի 1-ին, 2-րդ չափաբաժինները «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, իսկ 10-րդ չափաբաժինը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հայտարարել չկայացած:
5. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե էլեկտրոնային հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:
6. Համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկել ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնելու հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:
7. Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Դուրգարյան

Անդամներ՝ Հ.Վանյան

Ս.Սարգսյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան